

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (22-րդ տարի)

Այս թիւով.....

Մայիս 2022 (ԻԹ տարի թիւ 9)

Մայիս Ամսուան Բացատրական
Տօնացոյց Էջ 2-8

Յինանց Օրեր
Կարմիր Կիրակի
Յիսուսի Համբարձումը
Երկրորդ Ծաղկազարդ
Սուրբ Խաչի Երեւման Տօն
Համբարձման Տօնը



5-րդ Պատուիրանը Էջ 3

Սարդարապատ Էջ 9

1918 Թուականի Մայիսեան
Հերոսամարտը եւ Հայ Եկեղեցին Էջ 10

Հինգ հազարին կերակրումը Էջ 11

Ո՞րն է Ճիշդ Պատասխանը Էջ 12-15

Հոգեգալուստ (Պենտէկոստէ) Էջ 16

Շարական Հոգեգալուստի Էջ 16

Հ...Համբարձում

Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Ամսուան Համարը

«Հետեւաբար, գացէք եւ բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէք: Զանոնք մկրտեցէք՝ ջոր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց ստրվեցուցէք այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի, եւ ահա ես ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը: *Մատթէոս 28.19-20*»

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

<https://www.facebook.com/sourphagop.org>

https://www.instagram.com/sh_sundayschool/

Մայիս Ամսուան Բացատրական Տօնացոյց

Կիր. 1	Աշխարհամատրան (Կանաչ Կիրակի)
Կիր. 8	Կարմիր Կիրակի
Կիր. 15	Տօն Երեւման Սուրբ Խաչին
Եշ. 26	Տօն Քրիստոսի Համբարձման
Շրթ, 28	104-րդ տարեդարձ Հայաստանի Ա. հանրապետութեան
Կիր. 29	Երկրորդ Ծաղկազարդ

Պահքի Օրեր՝ 14, 19, 21, 24, 25, 26, 27, 28, 29,

Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի

Կանաչ Կիրակի անունը կը տրուի Չատկուայ երրորդ Կիրակիին, որ Չատիկէն 14 օր ետք կը հանդիպի եւ Չատկուան հետ 35 օրուան շարժականութիւն ունի:

Աշխարհամատրոտ բառը կը գործածուի իբր աշխարհաժողով, բազմութեան յատկացեալ եկեղեցի, եւ այս անունը տրուած է Սիոնի Վերնատան, ուր Քրիստոս իր վերջին զատկական ընթրիքը կատարեց եւ Ս. Հաղորդութեան խորհուրդը հաստատեց, եւ ուր առաքելները սովորութիւն ըրին հաւաքուիլ Քրիստոսի Համբարձումէն ետք: Այս տեղը հաւանաբար Յովհաննէս Մարկոսի տունն էր՝ ուր աղօթքի կը ժողվուէին նոր հաւատացեալները: Հայոց Եկեղեցոյ յատուկ է եկեղեցոյ անունով տօներ կատարել. ասոնց գլխաւորն է Աշխարհամատրանը՝ այսինքն Վերնատան քրիստոնէութեան առաջին եկեղեցին ըլլալուն յիշատակը, որ բոլոր քրիստոնէայ եկեղեցիներուն նախատիպն էր եւ եկեղեցոյ նուիրականութեան նշանակը: Աշխարհամատրան օրը Կանաչ Կիրակի ալ կը կոչուի:

Յիսուսի Համբարձումը

Համբարձում կը նշանակէ «բարձրացում»: Համբարձումը Յիսուսի յարութիւն առած ու փառաւորուած մարմնով երկինք բարձրանալու եւ Հայր Աստուծոյ աջ կողմը նստելու յիշատակումին տօնն է, որ տեղի կ'ունենայ միշտ Հինգշաբթի օր, Յարութեան 40-րդ օրը:

Յարութենէն ետք, Յիսուս իր աշակերտներուն երեւնալէ ետք, 40-րդ օրը իր աշակերտներուն հետ Ձիթենեաց լեռ բարձրացաւ ուր յայտնեց իր աշակերտներուն. «Երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք ու իմ վկաներս պիտի ըլլաք, Երուսաղէմի, Հրէաստանի, եւ Սամարիայի մէջ մինչեւ աշխարհի ծայրամասերը»: Երբ ան կ'արտասանէ այս խօսքերը, Յիսուս երկինք կը բարձրանայ մինչեւ որ ամպերը ծածկեն զինք աշակերտներուն տեսողութենէն: Այս պատուիրանին համաձայն Թադէոս ու Բարթողիմէոս Առաքելները Հայաստան կու գան հիմնելու

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Երկրորդ Ծաղկազարդ

Այսպես կը կոչուի Համբարձման յաջորդող Կիրակին: Ան իր անունը ստացած է պարզապես այդ օրուայ ճաշու Աւետարանէն որ կը կարդացուի եկեղեցոյ մէջ: Թէ ինչո՞ւ:

Հայ Եկեղեցին Նոր Կիրակիէն սկսեալ՝ 4 աւետարանները կը կարդայ շարունակաբար եւ այդ կարգին շարունակութեամբ 4 աւետարաններուն Քրիստոսի Երուսաղէմ մուտքին բաժինները կը կարդացուին Ս. Զատկին յաջորդող 6-րդ Կիրակիին ընթացքին՝ որ Համբարձումի յաջորդող Կիրակին է, երբ Ծաղկազարդի յիշատակութեան կրկնութիւնը տեղի կ'ունենայ: Այսպիսով ժողովուրդը երկրորդ անգամ ըլլալով կը լսէ Ծաղկազարդի հատուածը՝ որմէ անունը:

Երկրորդ Ծաղկազարդի օրն ալ Զատկուան պէս 35 օրերու շարժականութիւն ունենալով Մայիս 3-էն Մինչեւ Յունիս 6 կրնայ հանդիպիլ:

5-րդ պատուիրանը.

«Պատուէ՛ հայրդ ու մայրդ, որպէսզի կեանքդ երկար ըլլայ այն երկրին վրայ, որ ես՝ Տէրը, քու Աստուածդ, քեզի կու տամ:»

ՄԱՅՐ

Մեր բոլոր բանաստեղծները ամենէն քնքոյշ եւ սրտաթով բառերը վերապահած են մայրերուն: Մայրութիւնը այնքան նուիրական արժէք մը եղաւ հայ ժողովուրդին համար որ մայր բառը դարձաւ բնորոշիչ բառը հայոց ամենէն նուիրական սրբութիւններուն.

- Մայր Եկեղեցի, Մայր Աթոռ, Մայր Տաճար
- Մայր Հայաստան, Մայր հայրենիք, Մայրաքաղաք
- Մայրենի լեզու
- Մայր Արաքս:

Դուք ձեր կեանքով, նուիրումով, գոհողութեան գերազանց արտայայտութեամբ ամենէն մեծ դաստիարակներն էք հայ ժողովուրդի զաւակներուն: Ձեր դասագիրքը Ձեր սերն է, ձեր գրիչը՝ ձեր ժպիտը...

Արեգակի լոյսին պէս թող այդ ժպիտը միշտ ծագի հայ մանուկներու աչքերուն մէջ, երբ անոնց աչքերը բացուին աշխարհի լոյսին:

Գարեգին Բ. Կաթողիկոս
Մեծի Տանն Կիլիկիոյ

Կարմիր Կիրակի

Այս տարի, Մայիս 3-ին Հայաստանեայց առաքելական եկեղեցին կը նշէ Ջատիկի չորրորդ կիրակին՝ Կարմիր Կիրակին: Կարմիրը Քրիստոսի եկեղեցոյ և հաւատքի համար մարտիրոսացած նահատակներու արեան խորհրդանիշն է:

Կարմիր Կիրակին կը կազմէ գատկական տօնական հանդիսութիւններու շարունակութիւնը: Կը բնութագրուի ծիսական ուտեստով (կարմիր, կանաչ հաւկիթներ, եւայլն), ուխտագնացութեամբ, մատաղով:

Հաւանաբար սա եւս բնութեան հետ կապ ունեցող բան մըն է, քանի որ Կանաչ և Կարմիր Կիրակիներուն եկեղեցոյ մէջ սովորութիւն էր այդ գոյները գործածել, ըսենք՝ եկեղեցոյ վարագոյրը, քահանայի, դպիրներու ու սարկաւազներու զգեստները, Ս. Սեղանի սփռոցները, զանազան այլ իրեր:

Հետաքրքիր է, որ ժողովրդական լեզուով կանաչ-կարմիր կը նշանակէ նաեւ ծիածանի գօտի: Սահակ վարդապետ Ամատունին իր «Հայոց բառ ու բան» բառարանին մէջ կը գրէ. «Աղեղնակ, Անեղնակ, Կանաչ ու Կարմիր Աղեղն, ծիածան: Ծիածանի գօտին՝ որ ամպ ու անձրև օրերում կամարաձև երևում է երկնքի երեսին: Ծիածանը, որին կոչում են կանաչ ու կարմիր՝ Աստուծոյ գօտին է» (Արտակ Արք. Մանուկեան, «Հայ եկեղեցոյ տօները», էջ 154):

«Հին ժամանակներում, պսակի արարողութեան ընթացքում կանաչ-կարմիր ժապաւեններ էին կապում փեսայի և հարսի վրա, իբրև խորհրդանիշ պտղաբերության: Կանաչ-կարմիր կապել նշանակում է իրար հետ պսակուել: Կարմիր կանչել՝ հարսանիքի ժամանակ փեսայի համար դրամ հաւաքել, կարմրականչ անել՝ հիւրասիրութեան հրաւեր կատարել»,- կը շարունակէ հեղինակը:

Կարմիր գոյնը ընդհանրապէս պայքարի նշանն է, խորհրդանիշը կեանքի, կեանքի համար պայքարի ու յաղթանակի: Յաղթանակ քրիստոնէական ոգիի, բայց յատկապէս յաղթանակ քրիստոնէական ըմբռնումի: Պայքար իր տեղը, դիրքը և հաւասարակշռութիւնը պահելու համար: Պայքար՝ ունենալու համար այն անհրաժեշտ զօրութիւնն ու ոյժը, որով քրիստոնէան կը կարողանայ «զամենայն նետս մուխս չարին շիջուցանել», այսինքն՝ պայքարիլ այն ապականիչ ուժերուն դէմ, որոնք կը սպառնան մեր հոգեւոր կեանքը խաթարել, տկարացնել կամ սպաննել:

Քրիստոնէայ ըլլալու համար եռանդ և մարտական ազնիւ ոգի պէտք է ունենալ. ստիկա պայքարելու տրամադրութենէն զուրկ մարդու գործ չէ: Հարկաւոր է կենդանի ու ապրող հաւատք, բուն ներքին պայքար՝ հին կեանքի կուտակուած մոլութիւններէն ազատուելու համար:

Կարմիր Կիրակին քրիստոնէական քաջութեան յիշեցման օր է, իսկ քաջութիւնը հիփսական կէտն է քրիստոնէական առաքինութիւններու մէջ: Ուրեմս՝ Կարմիր Կիրակին յիշեցում է, որ քրիստոնէական կեանքը պայքար է վատ և տգեղ երևոյթներու դէմ:

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԵՐԵՄԱՆ ՏՕՆ

Ի յերկնից երեւեալ նշանն յաղթութեան այսօր, հեթանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան (Շարական)

Ամեն տարի՝ Ս. Զատկին յաջորդող հինգերորդ կիրակի օրը, մեր երանաշնորհ հայրապետներու տնօրինութեան համաձայն, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կը յիշատակէ Սուրբ Խաչի երևման տօնը՝ մէկ անգամ ևս յիշելով Տիրոջ չարչարանքները, անոր խաչելութիւնը եւ խաչի վրայ անոր թափած անմեղ արեան շնորհիւ մարդկային ցեղի փրկութիւնը: Այս տօնը պատմական դէպքի մը յիշատակութիւնն է:

351 թուի Մայիսի 7-ին, Կիրեղ Երուսաղեմացի հայրապետի օրով, օրուայ երրորդ ժամուն (ժամը 9-ին) երկնքի վրայ կ'երեւի Փրկիչի խաչի նշանը՝ տարածուելով Գողգոթայէն մինչև Ձիթենեաց լեռը: Այս դէպքին ականատես կ'ըլլան ոչ միայն Երուսաղեմի մէջ բնակող քրիստոնէաները, այլև տարբեր դաւանանքներու ու կրօններու պատկանող մարդիկ: Խաչի պայծառ երևումէն նոյնիսկ արեգակը կը մթագնի: Բոլորը կը շտապեն եկեղեցի, իրենց սրտի խորերէն աղօթելու առ Աստուած՝ գոհութիւն յայտնելով Բարձրեալին՝ այս մեծ շնորհին արժանացած ըլլալու համար: Երկնային հրաշքի շնորհիւ շատեր կը հաւատան Յիսուսին, կը մկրտուին սուրբ Կիրեղի ձեռքով՝ անդամագրուելով Քրիստոսի Եկեղեցոյ: Այս դէպքին առթիւ Կիրեղ հայրապետ նամակ մը կը գրէ Բիւզանդիայի Կոստանդին կայսրին, որ Մեծն Կոստանդիանոսի որդին էր: Նամակին մէջ սուրբը կը պատմէ Երուսաղեմի խաչի երևման մասին՝ յորդորելով, որ վերջինս հաստատ ժայ իր քրիստոնէական ճշմարիտ հաւատքի մէջ, ինչպէս նաև հաւատարիմ՝ նիկիական դաւանութեան: Այս թուղթը Ե. դարուն կը թարգմանուի հայերէնի և կ'ընթերցուի տօնի օրուայ առաւօտեան ժամերգութեան աւարտին՝ կատարուող անդաստանէն առաջ:

Մեր բազմադարեան պատմութեան մէջ ալ քիչ չեն խաչի երևումները: Երանելի Կորիւնը, ինչպէս նաև քերթողահայր Մովսէս Խորենացին, Հայ Եկեղեցոյ երրամեծ վարդապետ Մեսրոպ Մաշտոցի մահուան և թաղման կապակցութեամբ արձանագրած են, որ Վաղարշապատ քաղաքին մէջ օրեր շարունակ խաչի լուսապայծառ նշանը փայլեր է այն տան վրայ, ուր սուրբն աւանդեր էր իր հոգին: Այդ նոյն նշանն ալ առաջնորդ է եղեր բազմութեան՝ ամբողջ յուղարկաւորութեան ընթացքին: Եւ այսքան տարիներ յետոյ, շատերու մօտ հարց կրնայ ծագիլ թէ ի՞նչ է խաչը քրիստոնէաներու համար, և ի՞նչ է անոր նշանակութիւնը:

Խաչը Հռոմէական կայսրութեան ժամանակ մահապարտները անարգելու և նախատելու համար էր: Խաչելութիւնը ոչ միայն անպատուաբեր վախճան կը համարուէր, այլև հին աշխարհի յայտնագործած ամենաանմարդկային և դաժան պատիժներէն մէկն էր: Դատապարտեալը մերկ կը գամէին խաչին՝ ենթարկելով զանազան մարմնական խոշտանգումներու: Եւ խաչեալը կը տանջուէր, արևի կիզիչ ճառագայթները կ'այրէին անոր գլուխը, անբնական վիճակէն մարմինը կ'ուռճանար, վերքերը կը բորբոքէին անտանելի ցաւեր պատճառելով: Մահապարտը, երկար տանջուելէ յետոյ, կ'աւանդեր հոգին: Այդ ժամանակ տախտակներէ շինուած այդ գործիքը մահուան խորհրդանիշն էր: Հին Կտակարանին մէջ կը կարդանք. «Անիծեալ է ան, որ փայտէ կը կախուի» (Բ Օր. ԻԱ 23), բայց մեր Տէրն ու Փրկիչ Յիսուս Քրիստոս խաչի վրայ հեղած իր թանկագին արեամբ կենաց և օրհնութեան միջոցի վերածեց զայն «այդ անէծքէն մեզ ազատեց, ինք մեր տեղը անէծքի առարկայ դառնալով» (Գղ. Գ 13): Աստուածորդին միացաւ խաչափայտին սրբագործելով զայն և մեզ տալով «զենն յաղթութեան» ընդդէմ սատանայի ու անոր խաբկանքներուն:

Եթե մինչեւ Քրիստոս խաչը անարգանքի և նախատինքի նշանն էր, ապա Տիրոջ խաչելութեամբ անոր մէջ դրուեցաւ կեանքի խորհուրդը, և մարդ արարածը հնարաւորութիւն ստացաւ նոր արարած ըլլալու. «Ուեւ մէկը որ Քրիստոսի միացած է նոր արարած է. այլեւս չէ՛ այն՝ ինչ որ էր նախապէս» (Բ Կր. Ե 17): Քրիստոս խաչի վրայ ներեց մեզի, մեր մեղքերու պարտամուրհակը վերցուց մէջտեղէն՝ գամելով զայն խաչափայտին:

Մարդկութեան փրկութեան համար մարմնացած Աստուած խաչուեցաւ, թաղուեցաւ, բայց երրորդ օրը հրաշափառապէս յարութիւն առաւ մեռելներէն՝ քանդելով մահուան կապանքները: Այո՛, յարութիւն առաւ Տէրը, որովհետև Լոյսը չէր կրնար գերեզմանի մթութեան մեջ մնալ: Եւ այս իրողութիւնը նկատի ունենալով է որ սուրբ Կիրիլ Երուսաղէմացին կ'ըսէ. «Կը դաւանիմ Խաչը, քանզի գիտեմ Յարութիւնը»:

Հետևաբար խաչը մեզ համար յոյսի, սիրոյ, յաղթանակի և փրկութեան նշանն է, որուն վրայ Աստուածորդին պարտութեան մատնեց սատանային՝ մեր առջեւ բանալով դրախտի դուռը, որ մինչ այդ փակուած էր մեր նախածնողներ Ադամի ու Եւայի անհնազանդութեան պատճառով: Յիսուս խաչին վրայ ցոյց տուաւ իր անհուն սէրն ու անբաւ ողորմածութիւնը աղամորդիներուս նկատմամբ: Տէրն իր փրկագործութեան խորհուրդով խաչը վերածեց յաղթութեան նշանի: Եւ այս գիտակցութեամբ ու խոր համոզումով է որ քրիստոնէութեան մունետիկ Պօղոս Առաքեալ ի լուր բոլորին կ'ազդարարէ. «Քա՛ւ լիցի, որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ» (Գղ. 2 14): Այո՛, տէրունական նշանը ճշմարիտ քրիստոնէաներուս համար պարծանքներու պարծանքն ու Աստուծոյ անսահման սիրոյ արտայայտութիւնն է անկեալ մարդու նկատմամբ: Ճիշդ է, անհաւատ ու Տէրը չճաշակած մարդոց համար խաչի վրայ Քրիստոսի այս զոհողութիւնն անիմաստ և անհասկնալի կը թուի, բայց մեզի համար, որ մեր սրտերուն մէջ ընդունած ենք ճշմարիտ Աստուած՝ Յիսուս Քրիստոս, խաչը դարձած է փրկութեան գրաւականը: Անգիտութեան խաւարին մէջ խարխափող այս մարդոց մասին է առաքեալի խօսքը. «Որովհետեւ, ինչպէս յաճախ կ'ըսէի եւ հիմա եւս լալով կ'ըսեմ, մեր մէջ կան շատեր՝ որոնց կեանքը թշնամանք է Քրիստոսի խաչին: Անոնց վերջը կորուստ է, որովհետեւ իրենց Աստուածը իրենց փորն է: Ամօթալի բաներով կը հպարտանան եւ միայն երկրաւոր բաներու մասին կը խորհին» (Փլպ. Գ 18-19):

Ապա ինչեւ լի խաչի զօրութեանը՝ մենք կը խափանենք չարը, խաչակնքելով, մենք մեզի Աստուծով կը զօրացնենք, եւ անով կը զարդարենք մեր հողակերտ եկեղեցիները, անով կը կնքենք մեր զաւակները, անով կը պսակուինք, անով ալ գերեզման կ'իջնենք յաւիտենական կեանքի յոյսով: Ինչպէս Տիրոջ երկրային կեանքը խաչի ճանապարհ մը եղաւ, այնպէս ալ քրիստոնէաներուս համար այս ժամանակաւոր կեանքը խաչի ճանապարհ է: Ճանապարհ մը, որ անցուկ ու դժուար է, քարքարոտ ու փշոտ, բայց որու վերջնական հանգրուանը Տիրոջ խոստացած երկնային արքայութիւնն է: Սուրբ խաչի երևման տօնէն բխող պատգամն է, որ խաչակնքումը մեզի համար ոչ թէ ձեւական ու մեքենական շարժում մըն է, այլ ամէն անգամ երբ կը խաչակնքենք պահ մը կ'անդրադառնանք այն մեծ ինքնագոհութեան, որ Աստուած իրականացուց խաչին վրայ մեր փրկութեան համար: Մեր աղօթքը կը վերառաքենք առ ամենաբարին Աստուած՝ կրկնելով սուրբ հայրերու շուրթերուն բիրեղացած սրտառույ մաղթանքը.

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն, Տէր Յիսուս,
յորժամ երեւիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս:
Յայնժամ մեք մի՛ ամաչեսցուք
յուսացեալքս ի քեզ, այլ զօրութեամբ քով
մեծաւ բերկրեսցուք ընդ աջմէ քումմէ
որպէս զորդիս լուսոյ և որդիս տուրնջեան:

Համբարձման Տօնը

Համբարձումն եկաւ ծաղկունքը ավան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով:
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխոյժ երգերով:

Յովհաննէս Թումանեանի «Անոյշ»-էն



Ի՞նչ տօն կը նկարագրուի վերի քառեակին մէջ:

«Համբարձում» բառը որպէս արմատ ունի հին հայերէնի՝ գրաբարի «համբառնալ» բայը: Կը նշանակէ վեր բարձրանալ, վեր ելլել:
Խաչելութենէն ետք յարութիւն առնելով՝ Յիսուս Քրիստոս երկրի վրայ մնաց քառասուն օրեր եւս: Այդ ընթացքին, հանդիպելով առաքեալներուն՝ պատուիրեց անոնց երթալ Ձիթենեաց լեռը: Այդ լեռան վրայ Յիսուս օրհնեց զանոնք, պատուիրեց անոնց քարոզել ու տարածել քրիստոնէութիւնը: Այնուհետեւ Ան բարձրացաւ երկինք: Երկրէն երկինք Յիսուսի այս փոխադրութիւնը Նոր Կտակարանին մէջ կը կոչուի «Համբարձում»: Ս. Յարութեան տօնին մէջ «Համբարձումը» 35 օրուայ շարժականութիւն ունի եւ ամէն տարի Ս. Զատիկուան Կիրակիին յաջորդող 40-րդ օրն է, որ միշտ Հինգշաբթի կ'ըլլայ:

Տօնակատարութիւնները

Համբարձման տօնին նախորդող գիշերը ժողովուրդին կողմէ անուանուած է Համբարձման գիշեր: Այդ գիշեր աղջիկները ծաղիկներ կը հաւաքեն եւ եօթ աղբիւրներէ ջուր կը լեցնեն մէկ սափորի մէջ: Հաւաքուած ծաղիկներով փունջ կը կապեն եւ անով կը ծածկեն սափորի բերանը: Գիւղերուն մէջ, սափորը կը դնեն դուրսը, բաց երկնքի տակ, որպէսզի ան ծածկուի համբարձման ձօղով:

Առաւօտեան, աղջիկները տարբեր բանաստեղծական քառեակներ կը գրեն եւ կը դնեն այս սափորին մէջ: Վերջապէս հերթով կը հանեն գրուած երգերը այն հաւատքով, թէ անոնց մէջ ինչ որ գրուած է, կ'իրականանայ: Ահա այդ պատճառով այս երգերը կը կոչուին վիճակի երգեր: Այսինքն, իբրեւ թէ երգերուն մէջ գրուածը վիճակուած ըլլայ զանոնք հանող աղջիկներուն:

Երջանիկ ապագայի յոյսով վիճակ ձգելու այս գեղեցիկ սովորութիւնը ժողովուրդին մէջ յայտնի է «Զան Գյուլում» անունով:

Դե հանի՛ր աղջի
Վիճակն ի բարին
Երգերով գովենք
Էն իգիթ եարին




կամ

Համբարձման Տօնը (շար.)

Եկաւ համբարձում
Ծաղկով զարդարուած
Մեր բաղտին հարցում
Ո՞վ է մեզ գրուած

Աւանդութիւններ

Ըստ Ժողովրդական
աւանդութեան՝ Համբարձման գիշերը
բոլոր ծաղիկներն ու բոյսերը կը սկսին
իրար հետ գրուցել եւ ըսել, թէ իրենք
ի՞նչ ցաւ կրնան բուժել, կամ իրենց
արմատներուն մօտ ի՞նչ գանձ կայ
պահուած: Ահա այս պատճառով



մարդիկ այդ գիշեր կը փորձեն
հասկնալ ծաղիկներու լեզուն որպէսզի
խմանան անոնց գաղտնիքները:
Համբարձման գիշերուայ մասին հայոց
մեծ բանաստեղծը գրած է՝

Համբարձման գիշեր, էն դիւթիչ գիշեր

Կայ հրաշալի երջանիկ վայրկեան

Բացում էն ոսկի երկնքի դռներ,

Ներքե պապանձում, լռում ամէն բան,

Ու Աստուածային անհաս խորհրդով

Լեցում բովանդակ անոր սուրբ գթով:

Յովհաննէս Թումանեան «Անոյշ»-էն

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ



Գիտե՛ի՞ր թե՛

. Հայաստանի Հանրապետության Ջինանշանին կեդրոնը Արարատ լեռն է, որուն վրայ կը հանգչի Նոյեան Տապանը:

. Հայերենը Հայաստանի պաշտօնական լեզու հռչակուեցաւ Դեկտեմբեր 1919-ին:

. 1918-1920 Անկախ Հայաստանի վերջին դաշնագիրը՝ Սերի Դաշնագիրը ստորագրուեցաւ 10 Օգոստոս 1920-ին:

1918 թուականի Մայիսեան Հերոսամարտը եւ Հայ Եկեղեցին

1918 թուականի սկիզբներուն, թրքական բանակը, արեւմտեան Հայաստանի հայերը գեղասպանութեան ենթարկելէ վերջ, իր յառաջխաղացքը շարունակեց ձգտելով գրաւել նաեւ արեւելեան Հայաստանը: Այս սպառնալիքին դէմ կեցաւ հայ հասարակութիւնը իր ամբողջութեամբ, ներառեալ Հայաստանեայց եկեղեցին, որուն մասնակցութիւնը մայիսեան հերոսամարտին արժանի է յիշատակման: Նկատի ունենալով թուրքերու դէպի արարատեան դաշտ շարժումը, հայկական զօրքերու հրամանատարութիւնը դիմեց օրուան Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենեանցին, առաջարկելով անոր էջմիածնին սպառնացող վտանգին առջեւ կաթողիկոսական մայր աթոռը տեղափոխել աւելի ապահով տեղ՝ Բիւրական:

Ահա թէ ինչ էր կաթողիկոսին կոչը իր ժողովուրդին, առ ի պատասխան փախուստի այդ առաջարկին. «Ազգ հայոց, թուրքը մեր բանական հօտի դարաւոր թշնամին, նուաճել է Ալեքսանդրապոլը, շարժում է դէպի սիրտը մեր երկրի, մեր հաւատի, մեր կենսագրութեան: Գալիս է Արարատեան երկրի վրայ: Թուրքը, կոտորած ու աւեր սփռելով, գալիս է եւ մեր զօրապետներն էլ այլ էլք չեն գտնում այդ աղետից, քան Հայոց հայրապետին փախուստի մղել: Նրանք Ամենայն Հայոց կաթողիկոսին առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր աթոռ Սուրբ էջմիածինը, մեր սրբարանները, հայ ժողովուրդը, հայրենի երկրի վերջին կտորը: Առաջարկում են լքել այս բոլորը եւ սեփական կեանքը փրկել Բիւրականում կամ այլ անմատչելի լեռնածերպի վրայ: Ո՛չ եւ ոչ, հազար անգամ ոչ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից աւանդուած մայր աթոռը: Ես չեմ հեռանայ Հայոց առաքելական եկեղեցու օճախից: Եթէ հայոց զինուորութիւնն ու ինքը՝ հայ ժողովուրդը չեն կարողանայ թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթէ ի զօրու չեն լինի մեր սրբութիւնները, ապա թող եւ նահատակուեմ հենց այստեղ շեմի վրայ Մայր աթոռի, որու գահակալի պատին ունեմ մեր սուրբ նախնիների արդար բարեխօսութեամբ եւ Աստուծոյ ողորմածութեամբ: Միթէ մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օճախի կրակը, մեր հաւատի ջահը, մեր ազգային գոյի հիմքերը: Իսկ եթէ եկել է վերջը, ապա այն ինչո՞ւ չընդունենք պատուով ու քաջութեամբ եւ ոչ թէ ողորմելի զեռունի պէս ոսոխի առաջ սողալով: Մեր պատմութեան անցեալ դարերը լիքն են քաջութեան օրինակներով, ներկուած են նահատակների արեամբ: Դրանով չի սպառուել մեր արինը եւ չի կորսուել քաջութիւնը մեր շարքերից: Դարեր շարունակ հայոց ազգն այսպէս է ապրել՝ իր ինքնութեան համար պայքարելով, իր վաղուայ համար այսօր մեռնելով: Եւ որովհետեւ, ով գաղափարի՝ հետ է մեռնում, մեռնում է որպէս հատիկը ցորենի, ապա հատիկի մահով նոր կեանքեր են ծնուում վաղ թէ անագան: Դրա համար է, որ զանգուածային կոտորածներով ու մահերով հարուստ մեր կենսագրութիւնը չի ունեցել եւ երբեք էլ չպիտի ունենայ վերջին վերջակէտ: Ուրեմն էլ ինչո՞ւ դաւենք ապրելու եւ գոյատեւելու մեր ազգային կերպին: Ինչո՞ւ ազգովին չբարձրանանք թշնամու դէմ, որ գալիս է անդրարաքսեան իր թեթեւ յաջողութիւններով յղփացած եւ մեր արեան վերջին կաթիլին ծարալի...»:

Եւ վեհարանի դահլիճին ու Մայր աթոռի բակին մէջ հաւաքուած ամբողջ բազմութիւնը կերպարանափոխուած միահամուռ բացազանչեց.

- Պատրաստ ենք ելնելու, Վեհափառ Տէր:

Ապա ծերունագարդ հայրապետը, իր արծուային հայեացքն ուղղելով ժողովուրդին շարունակեց.

- Ես միշտ էլ հաւատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնութիւնները: Ես համոզուած եմ նաեւ, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դէմ չի ասել իր վերջին խօսքը: Եւ խօսքն այդ պիտի լինի յաղթական:

Կաթողիկոսին խօսքը բազմացուեցաւ տպարանին մէջ եւ ուղարկուեցաւ ռազմաճակատ...

Հինգ հազարին կերակրումը

Յովհաննէս 6:1-13


Յիսուս կերակրեց մեծ բազմութիւն մը միայն գարիի հինգ հացով եւ երկու ձուկով: Աւելցած կտորներն ալ տասներկու սակառ լեցուցին: Աստուած միշտ հրաշքներ կը գործէ երբ մենք վստահինք եւ հաւատանք իրեն: Լուծէ հետեւեալները եւ գտիր բազմութեան թիւը .-



- 1- Բազմապատկէ ձուկերուն թիւը X գարիի հացերուն թիւով
- 2- Պատասխան =
- 3- Բազմապատկէ թիւ 2 պատասխանը X աւելցած սակառներու թիւով
- 4- Պատասխան =
- 5- Գումարէ ձուկերու թիւը + գարիի հացերու թիւը
- 6- Պատասխան =
- 7- Բազմապատկէ թիւ 4 X թիւ 6 պատասխանները
- 8- Պատասխան =
- 9- Բաժնէ սակառներու թիւը երկուքով
- 10- Պատասխան =
- 11- Բազմապատկէ թիւ 8 X թիւ 10 պատասխանները
- 12- Պատասխան =
- 13- Թիւ 12 պատասխանէն հանէ 40
- 14- Քանի՞ հոգի կերակրեց Յիսուս
- 15- Պատասխան =



Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Ըստ Ղուկաս 24.50-53ի
օրհնեց, երկինք, երկրպագեցին, զԱստուած, Բեթանիա,
բաժնուեցաւ, Երուսաղէմ
Յիսուսի համբարձումը այս տարի Մայիս -- ին է:

Ապա տարաւ զանոնք մինչեւ ----- եւ ձեռքերը
վեր բարձրացնելով ----- զանոնք: Եւ մինչ
կ’օրհնէր, ----- անոնցմէ, դէպի -----
բարձրանալով: Անոնք ----- Յիսուսի եւ մեծ
ուրախութեամբ վերադարձան -----: Ամէն օր
տաճարին մէջ էին՝ գովելով ու օրհնաբանելով -----
-----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Այս տարի ե՞րբ կը տօնենք

Մայրերու օրը:

ա. Մայիս 8

բ. Մայիս 11

գ. Մայիս 12

դ. Մայիս 13

2.- Ասոնցմէ ո՞ր մէկը սխալ է:

ա. Նոր Կիրակի

բ. Սրճագոյն Կիրակի

գ. Կարմիր Կիրակի

դ. Կանաչ Կիրակի

3.- Հետեւեալներէն ո՞ր մէկուն

պատկերը Հայաստանի

Հանրապետութեան զինանշանին

վրայ կը գտնենք (երկու

պատասխան):

ա. Արարատ լեռը

բ. Նոյեան Տապանը

գ. 10 Պատուիրանները

դ. Յիսուսի Համբարձումը

4.- Հոգեգալուստը շաբթուան ո՞ր

օրուան կը գուգադիպի:

ա. Կիրակի

բ. Երկուշաբթի

գ. Երեքշաբթի

դ. Չորեքշաբթի

5.- Համբարձումը շաբթուան ո՞ր օրը

կը տօնենք:

ա. Երկուշաբթի

բ. Երեքշաբթի

գ. Չորեքշաբթի

դ. Հինգշաբթի

6.- Պատարագի ընթացքին ո՞վ
(որո՞նք) կ'երգէ (կ'երգեն) «Քրիստոս
ի մէջ մեր յայտնեցաւ...»:

ա. Պատարագիչը

բ. Սարկաւազը

գ. Քահանան

դ. Դպիրները

7.- Ողջոյն տուողը ի՞նչ կ'ըսէ:

Քրիստոս - մէջ --- յայտնեցաւ

8.- Ողջոյն ստացողը ի՞նչ կ'ըսէ:

----- է ----- Քրիստոսի

9.- Այս տարի Հայաստանի Ա.
հանրապետութեան քանիերո՞րդ
տարեդարձն է:

ա. 96

բ. 100

գ. 104

դ. 97

10.- Ո՞ւր ստորագրուեցաւ

Հայաստանի Ա. հանրապետութեան
վերջին դաշնագիրը 10 Օգոստոս
1920-ին:

ա. Սեւր

բ. Լոզան

գ. Պերլին

դ. Փարիզ

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ո՞րն է Կիրակիներուն ճիշդ

շարքը:

ա. Կրկնագատիկ, Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի

բ. Կանաչ Կիրակի, Նոր Կիրակի, Կարմիր Կիրակի

գ. Նոր Կիրակի, Կարմիր Կիրակի, Կանաչ Կիրակի

դ. Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի, Կրկնագատիկ

2.- Աշխարհամատրան Կիրակին կը կոչուի նաեւ.

ա. Կանաչ Կիրակի

բ. Կարմիր Կիրակի

գ. Կրկնագատիկ

դ. Նոր Կիրակի:

3.- Յիսուս իր յարութենէն քանի՞ օր ետք Համբարձաւ:

ա. Հինգ

բ. Յիսուն

գ. Քառասուն

դ. Երեք

4.- Յիսուսի Համբարձումը շաբթուան n-ր օրը կը տօնենք.

ա. Երկուշաբթի

բ. Հինգշաբթի

գ. Շաբաթ

դ. Կիրակի:

5.- Այս տարի Հայաստանի առաջին հանրապետութեան հռչակման քանի՞ երորդ տարեդարձն է:

6.- Յովհաննէս Թումանեան իր n-ր գործին մէջ Համբարձումի աւանդութիւնները կը նկարագրէ:

ա.- Շունն ու Կատուն

բ.- Անոյշ

գ.- Սուտիկ Որսկանը

դ.- Գիգոր

7.- Հին Կտակարանի n-ր դէպքը նշուած է Հայաստանի Հանրապետութեան զինանշանին վրայ:

ա. Տասնաբանեան

բ. Նոյի Տապանը

գ. Աշխարհի ստեղծագործութիւնը

դ. Բաբելոնի Աշտարակը

8.- Ամբողջացո՞ւր 5-րդ պատուիրանը:

Պ----- Հ----- ու -----, որպէսզի կեանքդ ----- ըլլայ այն երկրին վրայ որ ես Տէրը, քու Աստուածդ, քեզի --- ---:

9.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Քրիստոսի համբարձումը.

Մայիս -- ին:

10. Ո՞վ էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայիս 1918-ին:

----- Ե. Սուրենեանց

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ե՞րբ ստորագրուեցաւ Սեւրի
Դաշնագիրը:

Օ-----, 19--

2.- Ո՞րն է հետեւեալ օրերուն շիտակ
շարքը.

ա. Երկրորդ Ծաղկազարդ,
Հոգեգալուստ, Համբարձում, Տօն Սբ.
Էջմիածնի

բ. Երկրորդ Ծաղկազարդ,
Հոգեգալուստ, Համբարձում. Տօն Սբ.
Էջմիածնի:

գ. Համբարձում, Երկրորդ
Ծաղկազարդ, Հոգեգալուստ, Տօն Սբ.
Էջմիածնի:

դ. Տօն Սբ. Էջմիածնի, Համբարձում,
Երկրորդ Ծաղկազարդ,
Հոգեգալուստ:

3.- Հայերէնը ե՞րբ Հայաստանի
Հանրապետութեան պաշտօնական
լեզու հռչակուեցաւ:

ա. Դեկտեմբեր 1917

բ. Դեկտեմբեր 1919

գ. Մայիս 1918

դ. Փետրուար 1921

4.- Ամբողջացո՞ւր.

ա. Մայր -----

բ. Մայր-----

գ. Մայր-----

դ. Մայր-----:

5.- Հետեւեալներէն ո՞վ կրնայ
ձեռնադրութիւն կատարել.

ա. Սարկաւազր

բ. Եպիսկոպոսը

գ. Ծայրագոյն վարդապետը

դ. Աւագ Քահանան:

6.- Հոգեգալուստը Համբարձումէն
քանի՞ օր ետք տեղի ունեցաւ:

ա. Հինգ

բ. Տասը

գ. Տասնըհինգ

դ. Քսան

7.- Աստուածաշունչին ո՞ր գիրքին
մէջ կը կարդանք Հոգեգալուստին
մասին:

ա. Աւետարաններ

բ. Առաքեալներուն գործեր

գ. Պօղոսի նամակներ

դ. Ընդհանրական նամակներ

8.- Ըսէ՛ մէկ բառով

«Դոնապանութիւն, Ընթերցողութիւն,
Երդմսեցուցչութիւն կամ
Ջահընկալութիւն ընող».

.....:

9.- Յիսուս 5,000-ը ինչո՞վ կերակրեց

ա. 5 հաց եւ 2 ձուկ

բ. 2 հաց եւ 5 ձուկ

գ. 2 հաց 3 ձուկ

դ. 5 հաց եւ 5 ձուկ:

10.- Քանի՞ կողով աւելցաւ 5,000-ը
կերակրելէն ետք:

Նկարներ Կիրակնօրեայէն

Շաբաթ, 16 Ապրիլ 2022:

Ճրագալոյցի Ս. Պատարագէն առաջ, Ս. Յակոբ Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներ եւ ուսուցիչներ Ս. Գրային ընթերցուածները կարդացին:

